«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2012 թ. N 2

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ե) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.04.2012թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝ շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 5 % տարեկան եկամտաբերության հաշվարկով, մասհանումներ Գլխավոր պահուստին՝ զուտ շահույթի 5%-ը, չբաշխված շահույթ 16 928 000 (տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:

Ժողովի նախագահ՝ **Ս. Թևոսյան**